# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. չորրորդ եռամսյակում

### /վերլուծություն/

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 41577 գործարքներ, որոնց քանակը 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.9%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 11.6%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2008թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2008թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13227 օտարման գործարքների 79.8% կազմել են առուվաճառքները, 18.7%՝ նվիրատվությունները և 1.5%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.0% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 33.2% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2008թ. չորրորդ եռամսյակում, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 8.0%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 25.7%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.4%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 36.6%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Համայնքներ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|
| | չորրորդ ռամսյակ 2007թ. | չորրորդ եռամսյակ 2008թ. | երրորդ եռամսյակ 2008թ. |
| Կենտրոն | 470900 | 493900 | 488300 |
| Արաբկիր | 377700 | 398300 | 412700 |
| Քանաքեռ-Զեյթուն | 291900 | 306600 | 310300 |
| Նոր-Նորք | 250100 | 269100 | 278500 |
| Ավան | 250100 | 272800 | 273200 |
| Էրեբունի | 249700 | 268600 | 277100 |
| Շենգավիթ | 261700 | 277400 | 285300 |
| Դավթաշեն | 275300 | 300500 | 301800 |
| Աջափնյակ | 257700 | 263400 | 278800 |
| Մալաթիա-Սեբաստիա | 250400 | 255900 | 265500 |
| Նուբարաշեն | 136400 | 162000 | 157700 |
| **Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/** | **279300** | **297100** | **302700** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.9%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1207 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.1%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 25.3%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | չորրորդ ռամսյակ 2007թ. | չորրորդ եռամսյակ 2008թ. | երրորդ եռամսյակ 2008թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 111500 | 141900 | 139900 |
| | Ապարան | 30700 | 36800 | 35100 |
| | Թալին | 40300 | 47800 | 44800 |
| Արարատ | Արտաշատ | 90000 | 107100 | 106000 |
| | Մասիս | 112100 | 141700 | 132400 |
| | Վեդի | 71300 | 84300 | 82500 |
| | Արարատ | 58000 | 72400 | 64500 |
| Արմավիր | Վաղարշապատ | 143800 | 177600 | 171300 |
| | Արմավիր | 107500 | 128100 | 126400 |
| | Մեծամոր | 67200 | 91300 | 85400 |
| Գեղարքունիք | Սևան | 73500 | 104400 | 100400 |
| | Գավառ | 39400 | 51600 | 49800 |
| | Մարտունի | 59100 | 72600 | 68900 |
| | Վարդենիս | 28300 | 33300 | 32800 |
| | Ճամբարակ | 15500 | 16800 | 16400 |
| Լոռի | Վանաձոր | 78900 | 103600 | 100300 |
| | Ստեփանավան | 42200 | 49500 | 47900 |
| | Սպիտակ | 54900 | 63700 | 62600 |
| | Ալավերդի | 27600 | 32900 | 32400 |
| | Տաշիր | 28600 | 33500 | 32600 |
| | Թումանյան | 5500 | 5600 | 5600 |
| | Շամլուղ | 3200 | 3200 | 3200 |
| | Ախթալա | 12500 | 13000 | 13000 |
| Կոտայք | Աբովյան | 153000 | 176300 | 176700 |
| | Նոր Հաճն | 112400 | 141800 | 132300 |
| | Բյուրեղավան | 82400 | 120300 | 110600 |
| | Եղվարդ | 104400 | 127500 | 124000 |
| | Հրազդան | 57800 | 75900 | 71400 |
| | Ծաղկաձոր | 109900 | 170000 | 161900 |
| | Չարենցավան | 71800 | 99900 | 94900 |
| Շիրակ | Գյումրի | 81800 | 121100 | 109300 |
| | Արթիկ | 48700 | 61000 | 57100 |
| | Մարալիկ | 25800 | 29400 | 27600 |
| Սյունիք | Գորիս | 82300 | 114600 | 112100 |
| | Կապան | 73000 | 107400 | 95200 |
| | Սիսիան | 58600 | 86800 | 78700 |
| | Մեղրի | 42600 | 49600 | 47800 |
| | Ագարակ | 27300 | 30300 | 29400 |
| | Քաջարան | 39500 | 53600 | 52000 |
| | Դաստակերտ | 7000 | 7000 | 7000 |
| Վայոց Ձոր | Վայք | 68300 | 83800 | 78100 |
| | Եղեգնաձոր | 86700 | 106400 | 100500 |
| | Ջերմուկ | 114900 | 143700 | 130700 |
| Տավուշ | Դիլիջան | 76800 | 106000 | 101700 |
| | Իջևան | 102000 | 146800 | 131000 |
| | Բերդ | 36200 | 40600 | 40000 |
| | Նոյեմբերյան | 29000 | 31200 | 30500 |
| | Այրում | 21000 | 21100 | 21100 |

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 5.1%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1353 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 271, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1082: 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 2.7%-ով, ընդ որում, Երևանում՝ 15.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 1.1%-ով: 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 34.2%-ով, ընդ որում Երևանում՝ 52.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 27.1%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Համայնքներ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|
| | չորրորդ եռամսյակ 2007թ. | չորրորդ եռամսյակ 2008թ. | երրորդ եռամսյակ 2008թ. |
| Կենտրոն | 476500 | 509500 | 504300 |
| Արաբկիր | 391000 | 438400 | 436200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 296000 | 325400 | 320900 |
| Նորք-Մարաշ | 248400 | 312700 | 299100 |
| Ավան | 254100 | 290700 | 285100 |
| Էրեբունի | 253600 | 290800 | 287100 |
| Շենգավիթ | 264500 | 293500 | 291000 |
| Դավթաշեն | 279800 | 324500 | 315600 |
| Աջափնյակ | 262000 | 301800 | 295300 |
| Մալաթիա-Սեբաստիա | 254400 | 295100 | 284700 |
| Նուբարաշեն | 138100 | 171000 | 162400 |
| **Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/** | ***283500*** | ***323000*** | **316500** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 2.1 %-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ |
|---|---|---|

| | | չորրորդ եռամսյակ 2007թ. | չորրորդ եռամսյակ 2008թ. | երրորդ եռամսյակ 2008թ. |
|---|---|---|---|---|
| Արագածոտն | Աշտարակ | 116300 | 145000 | 144100 |
| | Ապարան | 33700 | 38900 | 38200 |
| | Թալին | 43000 | 48700 | 48200 |
| Արարատ | Արտաշատ | 95700 | 112200 | 108300 |
| | Մասիս | 115000 | 142500 | 138900 |
| | Վեդի | 72900 | 91700 | 91300 |
| | Արարատ | 63200 | 73100 | 67000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 145800 | 180300 | 176400 |
| | Արմավիր | 109900 | 132500 | 128800 |
| Գեղարքունիք | Սևան | 74900 | 106900 | 102500 |
| | Գավառ | 41300 | 55200 | 52000 |
| | Մարտունի | 60700 | 77600 | 76700 |
| | Վարդենիս | 30900 | 37100 | 35700 |
| | Ճամբարակ | 18800 | 21300 | 20900 |
| Լոռի | Վանաձոր | 84600 | 109900 | 104500 |
| | Ստեփանավան | 46100 | 53800 | 52800 |
| | Սպիտակ | 56600 | 67600 | 67000 |
| | Ալավերդի | 30100 | 37300 | 35900 |
| | Տաշիր | 30200 | 37900 | 36400 |
| | Թումանյան | 8800 | 10400 | 10200 |
| | Շամլուղ | 5800 | 7400 | 7200 |
| | Ախթալա | 15100 | 16200 | 16000 |
| Կոտայք | Աբովյան | 159100 | 192000 | 190000 |
| | Նոր Հաճն | 116700 | 144500 | 138900 |
| | Բյուրեղավան | 84000 | 121900 | 114600 |
| | Եղվարդ | 107600 | 133600 | 130500 |
| | Հրազդան | 61400 | 80600 | 76600 |
| | Ծաղկաձոր | 171800 | 271100 | 253100 |
| | Չարենցավան | 73800 | 101500 | 99300 |
| Շիրակ | Գյումրի | 87100 | 123400 | 111100 |
| | Արթիկ | 51100 | 63700 | 60700 |
| | Մարալիկ | 29000 | 32700 | 32200 |
| Սյունիք | Գորիս | 84700 | 126300 | 119500 |
| | Կապան | 77000 | 109200 | 97700 |
| | Սիսիան | 61000 | 88400 | 80900 |
| | Մեղրի | 45200 | 51700 | 50300 |
| | Ագարակ | 28900 | 33300 | 32800 |
| | Դաստակերտ | 9800 | 10400 | 10400 |
| Վայոց Ձոր | Վայք | 70200 | 86800 | 81400 |
| | Եղեգնաձոր | 89600 | 110400 | 104100 |
| | Ջերմուկ | 64100 | 100100 | 91200 |
| Տավուշ | Դիլիջան | 81100 | 119300 | 109600 |
| | Իջևան | 104200 | 148000 | 132900 |
| | Բերդ | 38900 | 42500 | 41400 |
| | Նոյեմբերյան | 34600 | 36600 | 35900 |
| | Այրում | 22800 | 23000 | 22900 |

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 4.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5303 միավոր /3191.36 հա/ հողեր, որից Երևանում՝ 265 միավոր /38.48 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 116 միավոր /55.69 հա/ հողեր, որից Երևանում՝ 57 միավոր /4.86 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2264 միավոր /2807.69 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /1.25 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2044 միավոր /180.18 հա/, որից Երևանում՝ 182 միավոր /18.42 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 897 միավոր /133.55 հա/, որից Երևանում՝ 67 միավոր /17.28 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 45 միավոր /27.93 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /1.54 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 36 միավոր /17.38 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 17 միավոր /24.62 հա/:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 4901 միավորի /2960.51 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 230 միավոր /29.60 հա/, նվիրատվության գործարքներ՝ 363 միավոր /205.06 հա/, որից Երևանում՝ 27 միավոր /4.30 հա/ և փոխանակության գործարքներ՝ 39 միավոր /25.79 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /4.58 հա/:

Հանրապետությունում 2008թ. չորրորդ եռամսյակում, 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 28.8%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 28.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 28.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 53.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 912.64 հա, որից 880.72 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 33.2% կամ 1627 գործարքներ /797.45 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 55 գործարքներ /6.95 հա/, իսկ 66.3% կամ 3250 միավորը /2161.04 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 174 միավոր /22.65 հա/: 2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 24 գործարք /2.02 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2008թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | *Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող* | | | | | | | | *Մասնավոր սեփականություն հանդիսացող* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 5 | 0.74 | 21 | 1.59 | 29 | 4.62 | 7 | 1.16 | 3 | 0.80 | 135 | 12.86 | 29 | 7.83 |
| Արագածոտն | 57 | 105.54 | 1 | 0.01 | 24 | 2.51 | 62 | 2.67 | 226 | 417.24 | 2 | 1.21 | 146 | 17.07 | 11 | 80.22 |
| Արարատ | 21 | 28.18 | 1 | 0.05 | 44 | 4.87 | 27 | 0.99 | 293 | 105.82 | 3 | 0.47 | 219 | 20.22 | 32 | 0.81 |
| Արմավիր | 51 | 194.70 | 2 | 0.11 | 6 | 0.33 | 54 | 1.71 | 338 | 686.02 | 3 | 2.33 | 274 | 26.12 | 24 | 1.33 |
| Գեղարքունիք | 12 | 23.41 | 1 | 0.04 | 209 | 11.36 | 66 | 3.61 | 116 | 85.49 | 1 | 0.01 | 59 | 7.79 | 3 | 0.19 |
| Լոռի | 7 | 7.05 | 0 | 0.00 | 33 | 1.45 | 112 | 3.27 | 131 | 187.38 | 3 | 7.34 | 38 | 4.09 | 13 | 0.23 |
| Կոտայք | 156 | 321.13 | 5 | 0.86 | 56 | 4.86 | 73 | 3.33 | 427 | 235.57 | 1 | 0.17 | 318 | 30.81 | 66 | 5.87 |
| Շիրակ | 9 | 10.15 | 7 | 2.51 | 115 | 4.05 | 78 | 2.61 | 56 | 64.18 | 0 | 0.00 | 30 | 2.74 | 10 | 0.25 |
| Սյունիք | 2 | 7.60 | 1 | 0.85 | 5 | 0.21 | 26 | 1.75 | 42 | 35.56 | 1 | 0.85 | 9 | 0.80 | 2 | 0.01 |
| Վայոց Ձոր | 19 | 15.15 | 1 | 9.50 | 28 | 1.92 | 82 | 0.92 | 21 | 19.12 | 0 | 0.00 | 15 | 1.60 | 6 | 0.25 |
| Տավուշ | 7 | 3.33 | 4 | 0.09 | 46 | 2.66 | 47 | 3.63 | 78 | 48.05 | 0 | 0.00 | 25 | 1.72 | 4 | 1.48 |
| Ընդամենը | 341 | 716.24 | 28 | 14.76 | 587 | 35.81 | 656 | 29.11 | 1735 | 1885.59 | 17 | 13.18 | 1268 | 125.82 | 200 | 98.47 |

Ստորև ներկայացվում է 2008թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | *Ուղղակի վաճառք* | | | | | | | | *Աճուրդ վաճառք* | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողերի | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակա կան կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 41 | 4.68 | 5 | 0.74 | 11 | 0.26 | 25 | 3.68 | 14 | 2.27 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 10 | 1.33 | 4 | 0.94 |
| Արագածոտն | 8 | 0.08 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 7 | 0.06 | 132 | 106.45 | 53 | 101.34 | 1 | 0.01 | 23 | 2.49 | 55 | 2.61 |
| Արարատ | 4 | 0.19 | 0 | 0.00 | 2 | 0.10 | 2 | 0.09 | 89 | 33.91 | 21 | 28.18 | 1 | 0.05 | 42 | 4.77 | 25 | 0.91 |
| Արմավիր | 20 | 0.42 | 2 | 0.11 | 0 | 0.00 | 18 | 0.31 | 92 | 194.62 | 50 | 192.90 | 0 | 0.00 | 6 | 0.33 | 36 | 1.39 |
| Գեղարքունիք | 2 | 0.05 | 1 | 0.04 | 0 | 0.00 | 1 | 0.01 | 286 | 38.38 | 12 | 23.41 | 0 | 0.00 | 209 | 11.36 | 65 | 3.61 |
| Լոռի | 18 | 0.35 | 0 | 0.00 | 6 | 0.15 | 12 | 0.20 | 134 | 11.42 | 7 | 7.05 | 0 | 0.00 | 27 | 1.30 | 100 | 3.07 |
| Կոտայք | 29 | 1.00 | 1 | 0.19 | 2 | 0.08 | 26 | 0.73 | 252 | 327.06 | 147 | 319.01 | 4 | 0.67 | 54 | 4.78 | 47 | 2.60 |
| Շիրակ | 35 | 1.23 | 1 | 0.11 | 15 | 0.58 | 19 | 0.54 | 174 | 18.09 | 9 | 10.15 | 6 | 2.40 | 100 | 3.47 | 59 | 2.07 |
| Սյունիք | 5 | 0.86 | 1 | 0.85 | 0 | 0.00 | 4 | 0.01 | 29 | 9.55 | 2 | 7.60 | 0 | 0.00 | 5 | 0.21 | 22 | 1.74 |
| Վայոց Ձոր | 6 | 9.54 | 1 | 9.50 | 0 | 0.00 | 5 | 0.04 | 124 | 17.95 | 19 | 15.15 | 0 | 0.00 | 28 | 1.92 | 77 | 0.88 |
| Տավուշ | 22 | 1.16 | 1 | 0.04 | 12 | 0.38 | 9 | 0.74 | 82 | 8.54 | 7 | 3.33 | 3 | 0.04 | 34 | 2.28 | 38 | 2.89 |
| Ընդամենը | 190 | 19.56 | 13 | 11.58 | 49 | 1.57 | 128 | 6.41 | 1408 | 768.24 | 327 | 708.12 | 15 | 3.17 | 538 | 34.24 | 528 | 22.71 |

Հանրապետությունում 2008թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 14 գործարքներ /8.12 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. չորրորդ եռամսյակում, 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 39.2%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 88.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 36.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 63.1%-ով, բնակելի կառուցապաման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճ չի գրանցվել, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 35.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 75.4%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 40 | 89.41 | 34.6 | 766.7 | 210.5 | 147 | 125.00 | 365.0 | 12000.0 | 3825.2 |
| Ապարան | 1 | 0.93 | 209.4 | 209.4 | 209.4 | 10 | 4.22 | 86.5 | 2727.3 | 481.7 |
| Թալին | 12 | 10.99 | 35.5 | 597.1 | 196.5 | 53 | 264.13 | 93.6 | 5494.5 | 495.2 |
| Ծաղկահովիտ | | | | | | 6 | 18.58 | 79.5 | 1000.0 | 210.6 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 6 | 8.95 | 521.3 | 3064.4 | 1425.5 | 133 | 42.19 | 335.1 | 10833.3 | 1942.3 |
| Մասիս | 5 | 13.56 | 76.5 | 273.6 | 170.7 | 45 | 15.30 | 200.0 | 11904.8 | 2573.3 |
| Վեդի | 10 | 5.67 | 180.0 | 3050.0 | 499.5 | 112 | 47.58 | 207.0 | 10795.1 | 1734.4 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 9 | 11.82 | 30.1 | 1134.0 | 115.5 | 156 | 138.88 | 294.3 | 9090.0 | 1136.3 |
| Բաղրամյան | 23 | 156.73 | 21.3 | 106.3 | 37.3 | 37 | 439.54 | 90.6 | 2561.1 | 660.9 |
| Վաղարշապատ | 18 | 24.35 | 39.1 | 622.1 | 205.0 | 142 | 104.17 | 444.4 | 11764.7 | 2271.5 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 81 | 32.89 | 199.8 | 1875.0 | 438.8 |
| Ճամբարակ | 1 | 1.50 | 528.7 | 528.7 | 528.7 | 4 | 1.31 | 60.5 | 953.3 | 199.8 |
| Մարտունի | | | | | | 3 | 0.49 | 51.1 | 2850.0 | 526.8 |
| Սևան | | | | | | | | 52.2 | 2134.8 | 212.5 |
| Վարդենիս | 11 | 21.91 | 143.0 | 362.5 | 182.2 | 28 | 50.80 | 41.2 | 2575.1 | 331.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 0.55 | 364.9 | 364.9 | 364.9 | 36 | 14.55 | 170.4 | 6424.2 | 1124.8 |
| Գուգարք | 2 | 1.61 | 360.0 | 366.0 | 363.0 | 17 | 7.45 | 234.6 | 6065.9 | 1029.5 |
| Սպիտակ | | | | | | 9 | 3.83 | 250.0 | 5555.5 | 569.7 |
| Ստեփանավան | 4 | 4.89 | 573.0 | 670.8 | 621.8 | 24 | 16.35 | 90.6 | 1686.6 | 411.9 |
| Տաշիր | | | | | | 45 | 145.20 | 45.3 | 1384.4 | 218.2 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 51 | 92.13 | 38.4 | 1385.5 | 327.7 | 191 | 99.97 | 279.3 | 11942.7 | 4549.6 |
| Եղվարդ | 52 | 93.76 | 50.3 | 2450.0 | 565.8 | 186 | 98.48 | 174.4 | 11971.8 | 3185.3 |
| Հրազդան | 44 | 133.12 | 33.3 | 2010.0 | 424.6 | 47 | 36.56 | 130.5 | 10256.4 | 1304.2 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 6 | 6.40 | 145.0 | 280.9 | 180.2 | 20 | 28.51 | 252.0 | 1693.1 | 485.5 |
| Ամասիա | 1 | 2.45 | 106.1 | 106.1 | 106.1 | 3 | 8.71 | 40.9 | 261.0 | 127.8 |
| Անի | 2 | 1.30 | 147.1 | 147.1 | 147.1 | 17 | 17.90 | 110.6 | 546.9 | 286.1 |
| Աշոցք | | | | | | 12 | 5.67 | 58.5 | 215.8 | 121.0 |
| Արթիկ | | | | | | 4 | 3.39 | 79.4 | 1428.6 | 194.8 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 19 | 13.32 | 92.6 | 1023.2 | 414.5 |
| Կապան | 2 | 7.60 | 325.2 | 340.7 | 333.0 | 9 | 7.69 | 120.0 | 841.6 | 258.8 |
| Մեղրի | | | | | | 1 | 0.01 | 193.0 | 3000.0 | 554.8 |
| Սիսիան | | | | | | 13 | 14.55 | 46.3 | 1977.4 | 281.3 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 17 | 12.15 | 37.1 | 572.5 | 250.8 | 15 | 15.14 | 125.0 | 10000.0 | 1405.6 |
| Վայք | 2 | 3.00 | 42.7 | 42.7 | 42.7 | 6 | 3.98 | 58.8 | 1430.7 | 526.2 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 13 | 4.98 | 213.3 | 3783.8 | 426.3 |
| Իջևան | 7 | 3.33 | 90.0 | 9200.0 | 1494.4 | 4 | 10.96 | 267.5 | 9454.5 | 928.5 |
| Նոյեմբերյան | | | | | | 61 | 32.12 | 46.7 | 7368.4 | 668.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 7 | 5574.0 | 173.1 | 40007.4 | 1065.7 | 123 | 126880.5 | 130.7 | 22200.0 | 2574.0 |
| Ապարան | 4 | 3829.0 | 189.0 | 268.7 | 228.6 | 9 | 14770.0 | 124.1 | 609.6 | 227.7 |
| Թալին | 12 | 15502.0 | 75.6 | 302.0 | 99.8 | 11 | 23395.0 | 63.2 | 1454.8 | 118.1 |
| Ծաղկահովիտ | | | | | | 2 | 4160.0 | 60.0 | 214.3 | 75.1 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 11 | 13074.0 | 385.5 | 537.7 | 517.8 | 51 | 52459.0 | 173.9 | 7140.3 | 927.0 |
| Մասիս | 30 | 33080.0 | 376.7 | 1980.2 | 963.7 | 111 | 87853.0 | 187.5 | 25000.0 | 1219.2 |
| Վեդի | 1 | 1508.0 | 232.1 | 232.1 | 232.1 | 55 | 60224.0 | 126.1 | 5000.0 | 680.4 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 800.0 | 652.0 | 652.0 | 652.0 | 107 | 105058.0 | 131.6 | 9090.9 | 1220.0 |
| Բաղրամյան | | | | | | 5 | 7800.0 | 100.0 | 833.3 | 159.4 |
| Վաղարշապատ | 5 | 2500.0 | 3828.0 | 4002.0 | 3871.5 | 159 | 145897.0 | 197.4 | 26528.4 | 1556.5 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 12 | 11661.0 | 186.6 | 1084.3 | 406.7 |
| Ճամբարակ | | | | | | 14 | 15678.0 | 71.3 | 2286.2 | 112.2 |
| Մարտունի | 150 | 63604.0 | 108.3 | 122.3 | 116.0 | 23 | 34023.0 | 119.3 | 5000.0 | 272.6 |
| Սևան | 59 | 49964.0 | 188.1 | 690.6 | 460.4 | 5 | 5117.0 | 240.0 | 3110.4 | 186.5 |
| Վարդենիս | | | | | | 5 | 11427.0 | 72.5 | 987.2 | 138.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 6 | 4840.0 | 114.3 | 1388.9 | 155.9 |
| Գուգարք | 21 | 9130.0 | 749.0 | 4750.2 | 2486.5 | 13 | 10698.0 | 77.9 | 14083.3 | 633.1 |
| Սպիտակ | | | | | | 7 | 9470.0 | 104.9 | 1348.3 | 155.3 |
| Ստեփանավան | 6 | 3912.0 | 161.0 | 277.2 | 236.3 | 7 | 10750.0 | 88.2 | 1666.7 | 123.5 |
| Տաշիր | | | | | | 4 | 4250.0 | 45.3 | 400.0 | 73.7 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 43 | 37063.6 | 275.5 | 4966.5 | 1160.7 | 134 | 135879.0 | 264.5 | 35353.5 | 2089.6 |
| Եղվարդ | 7 | 6760.0 | 1617.0 | 3381.0 | 2562.2 | 163 | 150027.0 | 173.6 | 27000.0 | 2386.4 |
| Հրազդան | 4 | 4000.0 | 393.0 | 403.0 | 398.0 | 21 | 22185.0 | 117.7 | 34848.5 | 1354.5 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 63 | 15898.7 | 290.4 | 5714.3 | 2465.2 | 14 | 13363.0 | 113.6 | 18750.0 | 335.1 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | 9 | 5970.5 | 45.8 | 525.0 | 302.3 | 5 | 6569.0 | 67.9 | 180.6 | 103.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 58.1 |
| Արթիկ | 28 | 12835.0 | 29.7 | 850.5 | 327.6 | 11 | 7498.0 | 111.8 | 5000.0 | 204.3 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 5 | 4081.0 | 112.2 | 1700.0 | 266.1 |
| Կապան | 1 | 600.0 | 422.3 | 422.3 | 422.3 | | | 67.9 | 2638.9 | 218.8 |
| Մեղրի | | | | | | 1 | 500.0 | 68.5 | 632.9 | 134.1 |
| Սիսիան | 4 | 1500.0 | 581.0 | 608.0 | 601.3 | 3 | 3370.0 | 123.5 | 875.0 | 154.4 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 9 | 5779.0 | 116.6 | 762.5 | 652.0 | 12 | 10775.0 | 96.7 | 7659.6 | 342.4 |
| Վայք | 19 | 13394.6 | 854.0 | 1324.4 | 884.0 | 1 | 2820.0 | 120.7 | 1448.3 | 130.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 1 | 200.0 | 75.8 | 810.0 | 91.5 |
| Իջևան | 30 | 20711.0 | 79.2 | 2750.0 | 1214.9 | 19 | 12247.0 | 74.1 | 14423.1 | 478.2 |
| Նոյեմբերյան | 4 | 2117.0 | 79.8 | 468.8 | 358.1 | 5 | 4760.0 | 125.0 | 1948.1 | 153.2 |

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 52 գործարքներ 6.83 հա մակերեսով, ընդ որում 12-ը՝ /1.66 հա/ Արարատի և 40-ը՝ /5.17 հա/ Լոռու մարզերում:

2008թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3170 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%: Ընդ որում, վարձակալության գործարքների 66.2% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. չորրորդ եռամսյակում, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 12.5%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 5.1%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 185 բնակարանների, 129 անհատական բնակելի տների, 1284 հասարակական, 160 արտադրական նշանակության օբյեկտների, 1351 միավոր /17667.67 հա/ հողերի և 61 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 50 վարձակալության գործարքների, այդ թվում 17 միավոր /0.05 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 26.5%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 71.4%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 17667.67 հա հողերից 5.01 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 17662.66 հա

հողերի 340.46 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 12961.97 հա, որից 12946.95 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 8465.51 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

| Մարզի անվանումը | Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի | | Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի | |
|---|---|---|---|---|
| | Վարձակալության գործարքների քանակները /միավոր/ | Վարձակալված հողերի մակերեսները /հա/ | Վարձակալության գործարքների քանակները /միավոր/ | Վարձակալված հողերի մակերեսները /հա/ |
| Արագածոտն | 4 | 896.09 | 45 | 131.34 |
| Արարատ | 0 | 0.00 | 22 | 40.59 |
| Արմավիր | 0 | 0.00 | 45 | 157.26 |
| Գեղարքունիք | 3 | 86.68 | 78 | 614.49 |
| Լոռի | 1 | 100.00 | 47 | 249.56 |
| Կոտայք | 5 | 1201.00 | 44 | 139.35 |
| Շիրակ | 3 | 113.00 | 129 | 381.76 |
| Սյունիք | 7 | 5944.34 | 83 | 7002.61 |
| Վայոց Ձոր | 1 | 124.40 | 24 | 20.96 |
| Տավուշ | 0 | 0.00 | 14 | 40.02 |
| **Ընդամենը** | **24** | **8465.51** | **531** | **8777.94** |

2008թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5605 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 23.1%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 27.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.9%/, առանձնատների /25.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.6%/ և հողերի /15.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2199 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 23.3%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 26.4%-ով:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 297 գործարքներ, որից 215-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 72.7%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15.8%-ը՝ անհատական բնակելի տների, 5.1%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 1.7%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.3%-ը՝ այգետնակների, 0.3%-ը՝ ավտոտնակների և 3.0%-ը՝ հողերի նկատմամբ: Գործարքների քանակը 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 51.9%-ով, ընդ որում Երևանում՝ 48.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 59.8%-ով :

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1231.44 հա հողեր, որից 13.44 հա՝ Երևանում: Ընդ որում, հողերի 84.8%-ը, կամ 1044.54 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.53 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 494.91 հա, որից 492.22 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 13 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.04%: 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 32.0%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 55.3%-ով: 2008թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արարատի մարզում՝ 23.5%, իսկ ցածրը՝ 5.9%, Վայոց Ձորի մարզում:

2008թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 7288 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 6.2%-ով, իսկ 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 5.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.3%/:

*ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն*